ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

1804, Ք. Սպիտակ, Շահումյան 7

Հեռ: (0-255) 2-25-00
Ֆաքս: (0-255) 2-25-97
E mail municipalityspitak@gmail.com

034/02- 736

«26» 09 2011թ.

ՀՀ Լոռու մարզպետ

պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան,

ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30 հոդվածի 8-րդ կետի համաձայն ուղարկվում է Սպիտակի համայնքի ավագանու 2011թ. սեպտեմբերի 20-ի որոշումները:

Առդիր՝ 8 թերթ:

Հարգանքներով՝

Քաղաքապետ Գ. Սահակյան

Կատ. Վ. Մկրտչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1804, ք. Սպիտակ, Շահումյան 7

Հեռ: (0-255) 2-25-00
Ֆաքս: (0-255) 2-25-97
E mail municipalityspitak@gmail.com

№ 43

«20» սեպտեմբերի 2011թ.

# ՈՐՈՇՈՒՄ

## ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16 հոդվածով, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասով, , Սպիտակի համայնքի ավագանին *որոշում է.*

1.Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011թ. հունիսի 1-ի թիվ 48-Ն հրամանով հաստատված կարգի համաձայն «Գործատուի մոտ մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպում» ծրագրին Սպիտակի քաղաքապետարանի մասնակցելու նպատակով արտաբյուջետային հաշիվ բացելուն:

Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան

"20" սեպտեմբերի 2011թ.
ք. Սպիտակ

Կողմ | Դեմ | Ձեռնպահ

Կ. Գասպարյան
Գ. Հարությունյան
Բ. Մաթոսյան
Հ. Շիրոյան
Ա. Սահակյան
Գ. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1804, ք. Սպիտակ, Շահումյան 7

Հեռ: (0-255) 2-25-00
Ֆաքս: (0-255) 2-25-97
E mail municipalityspitak@gmail.com

№ 44

«20» սեպտեմբերի 2011թ.

# ՈՐՈՇՈՒՄ

## ԱՐՄԵՆ, ԿՈՏԼԵՐ ԵՎ ՌՈՒԶԱՆՆԱ ԳԵՎՈՐԳԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003թ. հուլիսի 23-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը հաստատելու մասին» թիվ 983-Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ Սպիտակ քաղաքի բնակիչ Արմեն Բաղդասարյանը որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա, իսկ նրա քույրը և եղբայրը՝ Ռուզաննա և Կոտլեր Գևորգի Բաղդասարյանները՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց, վերցված են կենտրոնացված հաշվառման, համարվում են անօթևան և բնակարանի կարիքավոր, հիմք ընդունելով սոցիալական ծառայության Սպիտակի տարածքային գործակալության հանձնաժողովի բնակարանային պայմանների ուսումնասիրության ակտը և Ա. Բաղդասարյանի հոգաբարձու Ասվիտա Գևորգյանի դիմումը, Սպիտակի համայնքի ավագանին *որոշում է.*

1.Առանց ծնողական խնամքի մնացած Արմեն Գևորգի Բաղդասարյանին, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող Կոտլեր և Ռուզաննա Գևորգի Բաղդասարյաններին՝ որպես անօթևան և բնակարանի կարիքավոր, երեք անձով վերցնել բնակարանային հաշվառման:

Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան

"20" սեպտեմբերի 2011թ.
ք. Սպիտակ

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Կ. Գասպարյան | | |
| Գ. Հարությունյան | | |
| Բ. Մաթոսյան | | |
| Հ. Շիրոյան | | |
| Ա. Սահակյան | | |
| Գ. Սահակյան | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1804, ք. Սպիտակ, Շահումյան 7

Հեռ: (0-255) 2-25-00
Ֆաքս: (0-255) 2-25-97
E mail municipalityspitak@gmail.com

№ 45

«20» սեպտեմբերի 2011թ.

# ՈՐՈՇՈՒՄ

## ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԱՄԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 66 հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Սպիտակի համայնքի ավագանին *որոշում է*.

1. Համաձայնություն տալ Սպիտակ քաղաքի Ս.Ավետիսյան փողոցի վրա գտնվող սեփականության իրավունքով Վլադիմիր Ալեքսանյանին պատկանող տնամերձ հողամասի ընդլայնման համար՝ դրան կից համայնքային սեփականություն հանդիսացող 0534-0007 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից 220քմ մակերեսով հողամասը ուղղակի վաճառքով օտարելուն:

2. Համաձայնություն տալ Սպիտակ քաղաքի Ալ.Մանուկյան փողոցի վրա գտնվող 0534-0007 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից սեփականության իրավունքով Հրանուշ Դանիելյանին պատկանող անգարի զբաղեցրած 260քմ մակերեսով խառը կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով օտարելուն:

3. Հողամասերի ուղղակի վաճառքի գինը սահմանել կադաստրային գնի չափով՝ 1քմ 528 ՀՀ դրամ:

Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան

"20" սեպտեմբերի 2011թ.
ք. Սպիտակ

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Կ. Գասպարյան | | |
| Գ. Հարությունյան | | |
| Բ. Մաթոսյան | | |
| Հ. Շիրոյան | | |
| Ա. Սահակյան | | |
| Գ. Սահակյան | | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1804, ք. Սպիտակ, Շահումյան 7

Հեռ: (0-255) 2-25-00
Ֆաքս: (0-255) 2-25-97
E mail municipalityspitak@gmail.com

№ 46

«20» սեպտեմբերի 2011թ.

# ՈՐՈՇՈՒՄ

## ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 81 հոդվածի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Սպիտակի համայնքի ավագանին *որոշում է.*

1. Համաձայնություն տալ Սպիտակի համայնքի սեփականություն հանդիսացող 0490-0041 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից Շահումյան փողոցի վրա գտնվող 20քմ մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը, ավտոտնակ կառուցելու համար, առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով, 25 տարի ժամկետով Աշոտ Սիմոնյանին տրամադրելուն:
2. Համաձայնություն տալ Սպիտակի համայնքի սեփականություն հանդիսացող 0490-0041 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից Շահումյան փողոցի վրա գտնվող 20քմ մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը, ավտոտնակ կառուցելու համար, առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով, 25 տարի ժամկետով Հրաչ Սիմոնյանին տրամադրելուն:
3. Հողամասերի կառուցապատման իրավունքի տարեկան վճարը հաստատել 1քմ 300 ՀՀ դրամ:

Համայնքի ղեկավար Գ. Սահակյան

"20" սեպտեմբերի 2011թ.
ք. Սպիտակ

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Կ. Գասպարյան | | |
| Գ. Հարությունյան | | |
| Բ. Մաթոսյան | | |
| Հ. Շիրոյան | | |
| Ա. Սահակյան | | |
| Գ. Սահակյան | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1804, ք. Սպիտակ, Շահումյան 7

Հեռ: (0-255) 2-25-00
Ֆաքս: (0-255) 2-25-97
E mail municipalityspitak@gmail.com

№ 47

«20» սեպտեմբերի 2011թ.

# ՈՐՈՇՈՒՄ

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԶԲԵԿԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,05ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող N2 մարիչ հորի տարածքի տակ գտնվող հողը չի համապատասխանում հաստատված հողի կատեգորիային և ՀՀ անշարժ գույքի պետական կադաստրում այն գրանցելու համար անհրաժեշտ է փոխել այդ հողատարածքի նպատակային նշանակությունը (հողի կատեգորիան), հիմք ընդունելով «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի 26.05.2011թ. թիվ ՊԼ1-03/1427 և ՀՀ Լոռու մարզպետի 23.08.2011թ. թիվ 101/111.1/4401-11 գրությունները, Սպիտակի համայնքի ավագանին *որոշում է՝*

1.Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող Ուզբեկական թաղամասում գտնվող 0188-0022 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0.05հա մակերեսով հողամասը էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա փոխադրելուն՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող թիվ 2 մարիչ հորի նկատմամբ իրավունքի պետական գրանցման նպատակով:

Համայնքի ղեկավար Գ. Սահակյան

"20" սեպտեմբերի 2011թ.
ք. Սպիտակ

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Կ. Գասպարյան | | |
| Գ. Հարությունյան | | |
| Բ. Մաթոսյան | | |
| Հ. Շիրոյան | | |
| Ա. Սահակյան | | |
| Գ. Սահակյան | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1804, ք. Սպիտակ, Շահումյան 7

Հեռ: (0-255) 2-25-00
Ֆաքս: (0-255) 2-25-97
E mail municipalityspitak@gmail.com

№ 78

«20» սեպտեմբերի 2011թ.

# ՈՐՈՇՈՒՄ

## ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Սպիտակի համայնքի ավագանին *որոշում է.*

1.Համաձայնություն տալ Սպիտակի համայնքի սեփականություն հանդիսացող «Այրողրոմ» կոչվող հանդամասում գտնվող 0001-0010 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասերից 3հա մակերեսով 3-րդ կարգի ջրովի վարելահողը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն:

2.Համաձայնություն տալ Սպիտակի համայնքի սեփականություն հանդիսացող «Այրոդրոմ» կոչվող հանդամասում գտնվող 0001-0008 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասերից 2հա մակերեսով 3-րդ կարգի ջրովի վարելահողը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն:

3.Համաձայնություն տալ Սպիտակի համայնքի սեփականություն հանդիսացող «Օբյեկտի տակ» կոչվող հանդամասում գտնվող 0043-0002 և 0042-0024 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասերից 15հա մակերեսով 3-րդ կարգի ջրովի վարելահողը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն:

4.Համաձայնություն տալ Սպիտակի համայնքի սեփականություն հանդիսացող «Ղուրթափա» կոչվող հանդամասում գտնվող 0202-0016 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասերից 5հա մակերեսով 3-րդ կարգի ջրովի վարելահողը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն:

5.Համաձայնություն տալ Սպիտակի համայնքի սեփականություն հանդիսացող «Քարհանքի տակ» կոչվող հանդամասում գտնվող 0077-0002 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասերից 5հա մակերեսով 2-րդ կարգի անջրդի վարելահողը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն:

6.Համաձայնություն տալ Սպիտակի համայնքի սեփականություն հանդիսացող <<Քոռ աղբյուր>> կոչվող հանդամասում գտնվող 0547-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասերից 5հա մակերեսով 5-րդ կարգի անջրդի վարելահողը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն:

7.Հողամասերի մեկնարկային վարձավճարը սահմանել հողամասերի՝ կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամտի 30%-ի չափով, վարձակալության տրամադրման ժամկետը՝ 25 տարի:

Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան

"20" սեպտեմբերի 2011թ.
ք. Սպիտակ

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Կ. Գասպարյան | | |
| Բ. Մաթոսյան | | |
| Ս. Սահակյան | | |
| Գ. Հարությունյան | | |
| Հ. Շիրոյան | | |
| Գ. Սահակյան | | |